14.04.25

«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողով

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

/Արմեն Մաթևոսյանի կողմից հնարավոր վարքագծի վերաբերյալ կանոնների խախտման դեպքում կարգապահական վարույթ հարուցելու ընթացքում կատարված քննության արդյունքների մասին/

Հանձնաժողովը, մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ՝ Արման Սարգսյանի, հանձնաժողովի անդամներ՝ Լուսինե Սարգսյանի և Հարություն Գևորգյանի, քննարկելով ,,ԱՅ ԴԻ ԲԱՆԿ,, ՓԲԸ-ի /այսուհետ՝ դիմումատու/ Արմեն Մաթևոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և համապատասխան կարգապահական տույժ հարուցելու մասին դիմումը պարզեց՝

Դիմումատուի կողմից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ի տնօրեն՝ Ա.Ելինյանին է ներկայացվել դիմում, որով հայտնել է, որ ԵԱՔԴ/0201/04/17 սնանկության գործի շրջանակներում 29.05.18թ. կայացված վճռի հիման վրա, Սվետլանա Ռաֆիկի Հակոբյանը (այսուհետ նաև՝ Պարտապան) ճանաչվել է սնանկ: Ըստ դիմումատուի բանկի կողմից ներկայացվել է պարտատերերի ցուցակում ընդգրկվելու դիմում, որը բավարարվել է և դիմումատուի պահանջը գրանցվել է որպես ապահովված, իսկ 26.09.2018 թվականին երրորդ անձի կողմից իրականացվել է Ա/Ձ՝ Սվետլանա Հակոբյանի վարկի ամբողջական մարում՝ 23,747.55 ԱՄՆ դոլար գումարի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պարտքը մարված է եղել, դիմումատուն ազատել է գրավի առարկա հանդիսացող գույքը և վարկը փակվել է և սկսած 26.09.2018 թվականից անհատ ձեռնարկատեր Սվետլանա Հակոբյանը Բանկի հանդեպ որևէ պարտավորություն չի ունեցել: Այնուհետև, 21.02.2020 թվականին սնանկության գործերով կառավարիչ Արմեն Վլադիմիրի Մաթևոսյանի կողմից ներկայացվել է պարտապանի պարտավորությունների կատարման դիմաց փոխանցված գումարները, նրա անվամբ բացված սնանկության հատուկ հաշվին փոխանցելու պահանջի մասին հայցադիմում (քաղաքացիական գործի համար՝ ԵԴ/6492/02/20):Նշված քաղաքացիական գործով, 29.05.2024 թվականին, ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվել է բանկի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում և ըստ այդմ՝ օրինական ուժի մեջ է մտել վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը:Նշված քաղաքացիական գործով կայացված և օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա, Բանկը սնանկության հատուկ հաշվին է փոխանցել 23,747.55 ԱՄՆ դոլար գումարը և սնանկության կառավարչի հետ խոսելուց հետո պարզ է դարձել, որ վերջինս որևէ նպատակ չի ունեցել այդ գումարից բաշխում կատարելու և Բանկում առկա վարկի մարմանն ուղղելու: Ավելին՝ անհասկանալի է մնացել այդ միջոցների հետագա ճակատագիրը:

Հաշվի առնելով իր դիմումում նշված հանգամանքները, դիմումատուն առաջարկել է սեղմ ժամկետում քննարկել սնանկության կառավարչի վարքագիծը և կայացնել համապատասխան որոշում:

Նշված դիմումը քննարկելու նպատակով, «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սարգսյանի կողմից, 17.01.2025թ.-ին նշանակվել է լսումներ, որին ներկայացել էին Լուսինե Սարգսյանը, Հարություն Գևորգյանը, ինչպես նաև սնանկության գործով կառավարիչ՝ Արմեն Մաթևոսյանը:Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նշված նիստի համար քվորումը ապահովված էր, ուստի հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հայտնեց, որ այն ձայնագրվում է:

Նախ Ա.Սարգսյանը ինչպես սնանկության գործով կառավարիչին, այնպես էլ կարգապահական հանձնաժողովի անդամներին տրամադրեց դիմումատուի կողմից էլ.փոստի միջոցով ներկայացված դիմումը, որով դիմումատուն հայտնել է, որ թիվ ԵԱՔԴ/0201/04/17 սնանկության գործով 13.01.2025թ.-ին նշանակված դատական նիստը հետաձգվել է պարտապան Սվետլանա Հակոբյանի ոչ պատշաճ ծանուցման հիմքով:Հաշվի առնելով այդ հանգամանքը, որ դիմումատուի կարծիքով վերոգրյալ դատական նիստում տեղի ունեցածը և դատարանի որոշումը կարող է էական ազդեցություն ունենալ կարգապահական լսումների համար, ուստի խնդրել է հետաձգել նշանակված կարգապահական նիստը:Նշված նիստի ընթացքում, կառավարիչ՝ Արմեն Մաթևոսյանը հանձնաժողովին հայտնեց նաև, որ թիվ ԵԱՔԴ/0201/04/17 սնանկության վարույթի ընթացքում, դատարանի կողմից գործի քննությանը նաև մասնակից է դարձվել /ծանուցվել է նաև/ ,,ԱՅ ԴԻ ԲԱՆԿ,, ՓԲԸ-ն, չնայած այն հանգամանքին, որ ըստ կառավարիչի, բանկի կողմից նշված սնանկության գործով իր պահանջից հրաժարվել է:

Հանձնաժողովի անդամները, լսելով սնանկության գործով կառավարիչ՝ Արմեն Մաթևոսյանի հայտարարությունը ինչպես նաև հաշվի առնելով բանկ կողմից տրված դիմումը, միաձայն որոշոցին, որ ի հիմնավորումն բանկի կողմից տրված դիմումի, դիմել բանկին պահանջելով ստանալու այդ դիմումի հիմքում ընկած փաստաթղթերը և սույն որոշման 1-ին կետի հիմքով այդ փաստաթղթերի ստացման դեպքում, այդ փաստաթղթերը հիմնավոր ապացույց համարելով հետազգել «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի դիմումումի հիման վրա նշակված լսումները:Հանձնաժողովը իր առանձին կայացված ժողովին կայցրեց նաև որոշում, որով միաձայն որոշվեց հետևյալը՝ «ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի դիմումի, Արմեն Մաթևոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և համապատասխան կարգապահական տույժ հարուցելու մասին նշանակված լսումները հետազգել, ,,Սնանկության մասին,, ՀՀ օրենքի 27.3 հոդվածի 7-րդ կետով սահմանված ժամկետով, այն է՝ մինչև ս.թ. ապրիլի 17-ը ընկած ժամանակահատվածը:

Այնուհետև, վերը նշված որոշման հիման վրա, 2025թ.-ի ապրիլի 9-ին նշանակվեց կարգապահական նիստ, որին ներկայացել էին Լուսինե Սարգսյանը և Հարություն Գևորգյանը:Նշված նիստին Ա.Սարգսյանը հայտնեց, որ էլ.փոստի միջոցով, ,,ԱՅ ԴԻ ԲԱՆԿ,, ՓԲԸ-ի կողմից հանձնաժողովին է ներկայացվել դիմում, որով դիմումատուն հայտնել է, որ հաշվի առնելով սույն գործի հանգամանքները, ինչպես նաև այն, որ այս թեմայով ներկա պահին ՀՀ սնանկության դատարանում քննվում է գործ, ուստի սույնով բանկը հրաժարվում է իր պահանջից և խնդրել է վարույթը կարճել :

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը հայտնեց, որ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումատուն հրաժարվել է իր դիմումից, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճել:

Հանձնաժողովի անդամ՝ Լուսինե Սարգսյանը հայտնեց, որ եթե բողոք բարձրացնող անձը այս պահի դրությամբ հրաժարվում է իրն դիմումից և խնդրել է վարույթը կարճել, ուստի վերջինս կարծիք հայտնեց վարույթը կարճելու վերաբերյալ

Հանձնաժողովի անդամ, նախագահ Արման Սարգսյանը հայտնեց, որ **չնայած նրան, որ իրականում կարող էին դիմումատուի կողմից դիմումում ներկայացրած հանգամանքները իրոք հանդիսանալ կառավարչի կողմից վարքագծի կանոնի խախտում, սակայն հիմք ընդունելով այն հանգամանքը, որ դիմումից ըստ էության դիմումատուն հրաժարվել է՝ հայտնել է և խնդրել է վարույթը կարճել, ուստի նույնպես հայտնեց կարծիք, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:**

Չնայած նրան, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 27.4 հոդվածի պահանջներով, նման հիմքով, այն է՝ դիմումատուի դիմումի հիման վրա առկա չե հիմք վարույթի կարճման և կարող է այդ նորմին հավասարեցվել միայն այդ հոդվածի 1-ին մասի հիմքերը, սկայն հիմք ընդունելով այն փաստը, որ ըստ էության առկա չե բողոք՝ դիմում, ուստի սույն հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կից ներկայացվում է կարգապահական վարույթին առընչվող փաստաթղթերը՝ 16 թերթից, ինչպես նաև նիստի ձայնագրության կրիչը:

Ա.Սարգսյան

Լ.Սարգսյան

Հ.Գևորգյան